



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636

Հ-85

Ա. ՀԱՅ. ՀՈՒՅԵՍԻՆԻ

**ԲԱՑԼՇԵՎԵԿԻՑՈՒ. ՏԵՄՊ
ՍՈՑԱՆԱԾԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ**

ԳԵՂԱՐԱՑ

1931

ԵՐԻՎԱՆ

01 OCT 2010

13.06.2013

636
Հ-85
Կ

Ո. ՀՊՎ.ՀԱՆԽԻՍՑԱՆ

ԲԱՅԼԵՎԻԿԻՎԱՆ ՏԵՄՊ
ՍՈՑԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

1990



ԳԵՏՐԱԾ

ՀԱՅ. Ա. ԽՈՆԴՐԻ
ԱՅԱՍՏԱԿՅԱՆ ԿԿԿԿ

ՅԵՐԵՎԱՆ

15531-52

ԲԱՅԼԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊ
ՍՈՅ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԹՐՈՆՏՈՒՄ

«1931 յնվ 32 թվականներն ամպա-
նարաւծության ծավալման ասպարիզում
պետք է լինեն նույնական վճռական բնկան
տարիներ, ինչպեսին ենին 1929 յնվ՝ 30 թվա-
կանները տացիալիստական հացահատիկն
ին նմանաւորյան կազմակերպման բնո-
գավառում»:

(Համ. Կամուսի Կենտկոմի յնվ ժողովա-
խորի հուլիսամ դիմումից):

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՊՐՈԲԼԵՄԻ ԼՈՒՇՄԱՆ
ՈՒՂԻՈՎ

Մի քանի տարի սրանից առաջ (27-28 թ.թ.) մենք
առլրեցինք լուրջ դժվարություններ մեր յերկիրը հա-
ցով ապահովելու տեսակետից: Զնայած նրան, վոր
1927 թ. հացահատիկային ցանքաղաշտերի տարածու-
թյան տեսակետից մենք արդեն հասել ենինք նախապա-
տերազմյան մակարդակին, (միայն 5 տոկոսով պակաս)
չնայած նրան, վոր հացահատիկի ընդհանուր արտադ-
րանքով մենք արդեն մոտեցել ենին նախապատերազմ-
յան չափերին (ի դիմաց նախապատերազմյան շրջանի 5
միլիարդ փութ ընդհանուր հացի, 1927 թ. արտադրել
ենին 4.749 միլ. փ.) և վերջապես չնայած այն բանին,
վոր մենք 27-28 թվականներին Խորհրդային Միությու-

նից արտահանել եյինք ընդամենը 27 միլիոն փութ հաց, ընդդեմ ցարական Ռուսաստանի միլիարդ փոթերի, այ-
նուամենայնիվ մենք այդ շրջանում լուրջ դժվարու-
թյուններ ապրեցինք հացի ասպարիզում:

Ի՞նչն եր այդ դժվարությունների պատճառը: Պատ-
ճառն այն եր, վոր ապրանքային հացի արտադրության
տեսակետից մենք չառ հեռու եյինք նախապատերազմ-
յան մակարդակից (1927 թ. հացարույսերի արտա-
գրման ապրանքային մասը կազմում եր նախապատե-
րազմյանի միայն 37 տոկոսը), վոր ապրանքային հացի
արտադրությունը ավելի գանդաղ եր առաջ գնում, քան
թե որ-որին աճող սպառման պահանջները:

Իսկ վո՞րն եր ապրանքային հացի արտադրության
այդչափ հետ մնալու հիմնական պատճառը: Հիմնական
պատճառը կայանում եր Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունից հետո հիմնովին փոփոխված մեր գյուղատը-
տեսական կառուցվածքում, պատճառը կայանում եր
նրանում, վոր խոշոր կալվածատիրական և կուլակային
անտեսություններին, վորոնք արտադրում եյին ապրան-
քային հաց ավելի մեծ չափերով, մոխարինեցին մասը
չքավոր ու միջակային անտեսությունները, վորոնք ան-
ցոր եյին նույն չափերով ապրանքային հաց արտադրե-
լու: Հայտնի յե, վոր հեղափոխությունից հետո մանր
գյուղացիական անտեսությունների թիվը մեղանում
15-16 միլիոնից բարձրացավ մինչեւ 25-26 միլիոնի:

Այս դժվարությունները կարողացավ ողտադրծել
գյուղի կուլակը: Նա կարողացավ բարձրացնել հացի
վները, իր ձեռքում կենտրոնացնել հացի զդալի պաշար-
ները և սպառնալ մեզ, արդյունաբերական պրոլետա-
րիատին, բանակին և քաղաքի այսամասությունները հաց
ժատակարգելու տեսակետից:

Վո՞րին եր այդ դրությունից դուրս գալու յեկը։
Հիմնական յելքը կայանում էր նրանում, վոր մենք
դուրս գայինք հացի արտադրության սոցիալիստական
նախաղարեր, կազմակերպելինք հացահատիկային խո-
շոր խորհրդային տնտեսություններ, միավորելինք ան-
հատական չքավոր-միջակային տնտեսությունները կո-
լեկտիվ տնտեսությունների մեջ, ստեղծելինք ապրան-
քային հաց արտադրող սոցիալիստական գիտանտներ։
Դրա հետ միասին մենք ստիպված ենք ժամանակավոր
արտակարդ միջոցների կիրառմամբ հարկադրել կու-
լտակներին հանձնելու պետությանը իր մոտ յեղած հացի
պաշտաները և կազմակերպել վճռական պայքար ընդդեմ
գյուղի կուլտության։

Այս հիման վրա մեր կուտակցության կենտրոնական
կոմիտեն 1928 թ. վորոշեց՝ «յերեք-չորս տարում կազ-
մակերպել խոշոր հացահատիկային խորհրդային տնտե-
սություններ այնպիսի հաշվով, վոր նբանք այդ ժամա-
նակամիջոցի վերջին կարողանան տալ վոչ պակառ,
քան 100 միլիոն փութ ապրանքային հաց»։

Կուտակցության կենտրոնական կոմիտեի այս
ժամանական վորոշումը կատաղի ընդդիմադրության
հանդիպեց դասակարգային թշնամու կողմից Քուրժուա-
կան տնտեսագետները այդ վորոշումները սվինի ծայրը
հանեցին։ Նրանք սկսեցին «դիտությամբ» հիմնավո-
րել, վոր անհնար և այդքան կարճ ժամանակամիջոցում
կազմակերպել այդպիսի վիթխարի տնտեսություններ։
Նրանք սկսեցին վաստարկումներ քերել այն մասին,
վոր Խորհրդային իշխանությունը դեմ և զնում գյուղա-
տնտեսական տարրական դիտելիքներին, դեմ և զնում
ցանքսարչանառության կանոններին և այլն։

Դասակարգայի թշնամու և նրա դիտնականների

այդ վայրահաջողին ձայնակցեցին մեր կուտակցության
ապրուտունիստական տարրերը։ Նրանք զլուխ բարձրաց-
րին այդ վորոշումների դեմ։ Սկսեցին ձայներ լովել այն
մասին, վոր խորհուտասություններին հատկացված
փողերը «ջուրը զցած» փողեր են, վոր «կոլտնտեսու-
թյուններն ու խորհրդային տնտեսությունները անհրա-
ժեշտ քանակությամբ հաց կարող են տալ միայն 5-10
տարուց հետո» (Բուխարին), վոր «ալեվի լավ և զարկ
տալ անհատական տնտեսություններին», «չխանդարել
կուլակային տնտեսությունների զարգացմանը», պա-
կասող հացը ներմուծել արտասահմանից և այլն և այլն։

Կուտակցությունը հարկադրված եր վճռական պայ-
ցար մեջ, ինչպես դասակարգային թշնամու և բուր-
ժուական բոլոր կարգի տնտեսագետների, նույնպես և
մեր կուտակցության աջ սպորտունիստական տարրերի
դեմ, և լենինյան հաստատութամությամբ առաջ սանել
հացահատիկային խորհուտեասությունների և կունտե-
սությունների կազմակերպման քաղաքականությունը։
Լենինյան այդ հաստատուն գծի անշեղ կիրառման հի-
ման վրա մենք այս տարի, այսինքն խորհուտվնարա-
րության մասին կենտրոմի ընդունած վորոշումների,
յերրորդ տարում ստանալու յենք միայն խորհրդային
տնտեսություններից 200 միլիոն փութ ապրանքային
հաց։ Այսպիսով հակառակ սպորտունիստական մարդա-
րեյություններին՝ կուտակցության կենտրոմի վորոշումը
երագործվեց ժամանակից առաջ և ապրանքային հաց
ստացվեց կրկնակի չափերով։ Նույն այդ հաստատուն
քաղաքականության կիրառման հիման վրա մենք անց-
ջայ տարի հիմնականում լուծեցինք հացահատիկի
պրոբլեմը, ինչ այս տարի այն լուծելու յենք վերջնա-
կանապես։ Ահա սրանք են կուտակցության լենինյան

գծի կիրառման հաղթանակի արդյունքները հացահատիկի Փրոնտում :

Հացի պրոբլեմը հիմնականում լուծած լինելուց հետո, կուսակցության առաջ ամրող հասակով ծառանում ելին անասնաբուժության և տեխնիկական մշակույթների պրոբլեմների միաժամանակ լուծման խնդիրները : Լուծելով գյուղատնտեսության զարգացման մյուս բոլոր բնագավառների հիմնական ողակը հանդիսացող հացի պրոբլեմը, կուսակցությունը կարող երդանալ անասնապահության և տեխնիկական կուլտուրաների այդ չափազանց կենսաթոթիու հարցերի լուծմանը, հացահատիկային պրոբլեմի լուծման վորձված մեթոդներով :

Տեխնիկական մշակույթների ասպարիզում մենք արդեն ունենք լուրջ հաջողություններ : Մենք կարողացանք բայց շեղիկայն պայքար ծավալել բամբակի անկախության համար մղվող սրայքարի Փրոնտում և ամուր դիրքեր գրավել այդ բնագավառում :

Ինչպես և գրությունը անասնապահության Փրոնտում :

Յեթե հացահատիկային տնտեսության ասպարիզում նախահեղափոխական Ռուսաստանում կալվածատերերը արտադրում ելին ապրանքային հացի 21,6 տոկոս, իսկ կուլակները՝ 50 տոկոսը, *) ապա այդպիսի գրություն գոյություն չուներ անասնապահության Փրոնտում : Բնիկեր Նեմչինովիկ տոլյաների համաձայն, նախահեղափոխական Ռուսաստանում կալվածատիրու-

*) Տպարանները վերցնուու ենք բնիկ Ստալինի «Խառնություն» հոգիածում բերված բնիկ նեմչինովիկ աղյուսակից : Տես «Վորօս լենինիզմ» հջ 488, ուսիւն հրատարակություն :

կան և կուլակային տնտեսություններն ընդգրկում եյին 2-3 միլիոն զլոտիս խոշոր յեղջյուրավոր անասուն, վորը կաղմում եր ամրող յերկրի անասնանների միայն 3,8 տոկոսը : Այսպիսով, յեթե նախակին ցարական Ռուսաստանում կալվածատիրական և կուլակ՝ տնտեսությունները խոշոր կշիռ ունենալին հացի գրության ասպարիզում, ապա անասնապահության բնագավառում խոշոր և բարձըր ապրանքայնություն ունեցող կապիտալիստական անասնապահություն համարյա քեզ գոյություն չուներ : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առավել ես, մինչև վերջին շրջանում մեր անասնապահությունը գրեթե ամրող զույն հենվում եր մանր, փոշացած, ծայրաստիճան սակավ ապրանքայնություն ունեցող չքավորամիջակային տնտեսությունների վրա : Դեռ ավելին, Խորհրդային Միության մի շաբք շրջաններում անասնապահության զգալի մասը հենվում եր քոչվորական և կիսաքոչվորական այդ ծայր աստիճան հետամընաց և բարբարոս տնտեսաձեվիլ վրա :

Վորըն եր մեր անասնապահության ընդհանուր պատկերը, նախաքան կուսակցության ձեռնարկումը նրա սոցիալիստական գործի վերակառուցման :

Խորհրդային Միությունը, խոշոր յեղջյուրավոր տնտեսունների քանակի տեսակետից, ամրող յերկրագրենուդի վրա յերկրորդ տեղն և գրավում, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո : 1929թ. Ամերիկայում խոշոր յեղջյուրավոր անասունները հաշվվում ելին 55 միլիոն 751 հազար զլոտիս, իսկ Խորհրդային Միության մեջ 67 միլ. 231 հազար, այսինքն ավելի քան 19 տոկոս*) : Սակայն միայն ֆանակով և ուրիշ չաշխնչ :

*) Տես «Մակատագիրի նախազահ ընկ» Գրաւեկվոկու զեկությունը Խորհրդապների 6-րդ համագումարում :

Իսկ յեթե մենք գիտելու վենինք վորակական ցուցանիշ-ները, այսինքն յեթե վերցնենք մոխ ընդհանուր արտադրանքը մեզ մոտ և Ամերիկայում, կստանանք միանդամայն հակառակ պատկեր: Մոխ ընդհանուր արտադրության տեսակետից ԽՍՀՄ-ը գրավում է Ամերիկայի ժիայն 59,4 տոկոսը: Դա հետեւանք են նրան, վոր Ամերիկայում խոչոր լեղջուրավոր անսառունի քաշը հասնում է մինչև 500 կիլոդրամի (31 փութ): Այսինչ մեղ մոտ ամենաշատը 235 կիլոդրամի (16 փ.) ըստ վորում Ամերիկայում կարողացել են հասնել այնպիսի դրության, վոր մեկ ու կես-յերես տարեկան հասակ ունեցող անառունից 31 փ. միևնունակ նախկին հինգ տարեկանի փոխարեն, այն ինչ, մեղ մոտ մենք 16 փութ միս ստանում ենք միայն 4-5 տարեկան հասակ ունեցող անառունից: Այսպիսով անառուների ավելի քարքի անառի առկայության պայմաններում մենք ստանում ենք ավելի քիչ ապրանքային պրոդուկցիա: Նոյնը դոյլյություն ունի նաև կաթնամթերքների բնադրակառություն և անառնապահությունը, ինչպես գիտա-տեխնիկական տեսակետից, նույնպես ել սոցիալ-տնտեսական իմաստով: Ահա այս եր պատճառը, վոր կուսակցության կենտրոնական Կոմիտեն 30 թվականին ամրող վճռականությամբ գրեց անառնապահության պրոբլեմի արմատական լուծման խնդիրը կուսակցության և բանվոր դասակարգի առաջ:

Վո՞րն ե անառնապահության ապրանքայնության այլքամքային սահմանադրություն ամառականի հիմնական պատճառը մերգանում: Կենդանաբուծության անբավարար դրության իմանական պատճառը մեզանում հանդիսանում է մաքր և սակավ ապրանքային տնտեսության անկայութությունը ու անհուսալիությունը, հանդիսանում է զանան, մի քանի վոչյար կամ յեղջուրավոր անորակ անառությունը ունեցող անհատական տնտեսությունը. հանդիսանում է կերի պակասի անբնդիսատ սպասարկիքի տակ իր տնտեսությունը մի կերպ քարշ տվող անհատական պրիմիտիվ անառնապահությունը: Ահա թե վորոնք նև մեր անառնապահության հետամնացության արժա-առական պատճառն այս:

Կարելի՞ յե յերկար հանդուրժել այլպիսի զրության անառնապահության տապարիզում, յերբ մեր յերկրի բանվոր դասակարգը Կոմիտեի ղեկավարությամբ վերջնականապես լուծեց «ով ումի» խնդիրը արդյունաբերության գծով, ինպատճեն սոցիալիստական հատվածի, յերբ մենք լուծեցինք հացահատիկային պրոբլեմը, յերբ մենք դյուզատնտեսությունը դուրս բերեցինք լայն սոցիալիստական ձանապահն և յերբ մենք թեակունել ենք սոցիալիզմի շրջանը: Կարելի՞ յե հանդուրժել այլպիսի դրության, յերբ անառնապահության նման ցածր մակարդակը սպասմում եր բանվոր դասակարգին մասի և կաթնամթերքով բավարարելու կարիքներին, յերբ անառնապահության ապրանքային պրոդուկցիայի աճումը չեր գուգորդվում նրա սպասման պահանջներին: Այլպիսի դրություն յերկար շարունակել չեր կարելի:

Անհրաժեշտ եր անհամեմատ ավելի կարն ժամանակամապահությունը, ինչպես գիտա-տեխնիկական տեսակետից, նույնպես ել սոցիալ-տնտեսական իմաստով: Ահա այս եր պատճառը, վոր կուսակցության կենտրոնական Կոմիտեն 30 թվականին ամրող վճռականությամբ գրեց անառնապահության պրոբլեմի արմատական լուծման խնդիրը կուսակցության և բանվոր դասակարգի առաջ:

Անհրաժեշտ եր անհամեմատ ավելի կարն ժամանակաշրջանում կազմակերպել անառնապահության գիտական խորհրդային տնտեսություններ, կազմակերպել կոլտնտեսական ապրանքային ֆերմաններ: Անհրաժեշտ եր անառնապահության պրոբլեմը լուծել այնպես, ինչպես մենք լուծեցինք հացահատիկի պրոբլեմը: Անհրաժեշտ ե պատճենապահության մեջ առաջին անդամ կազմակերպել խոչոր անառնապահություն, չունենալով անցյալի

Հարեն փորձ այդ ասպարիզում : Յեվ ահա այդ պատմական գորոշումից անմիջապես հետո ; , 1930թ . առու ջն անզամ չինական սահմանադրիսի մոտ , հետավոր Սիբիրի տայղաներում , յերկաթդիր հազարամիսը վերսու հետախորսության վրա յերեսում են «Սկսուսպողի»՝ հետազա մսի Փարբիկայի կաղմակերպիչները : Նույն տարում մեկը մյուսի հետեւից ծնունդ են առնում «Ակոտովզողի» , «Մինուլոդի» , «Ուցելողի» և այլ խորհրդային անտեսություններ , սոցիալիստական անասնապահության հետակետները մեր յերկուսում : Այսուհետեւ ծայր տուավ կալմանեսական անասնապահական սովորանքային Փերմաների կազմակերպումը բավանդակ Խորչըրգային Միության տերբիտորիայում :

Սակայն անասնաբուծության Փրոնտում մենք սովորված ելինք հաղթահարել ավելի մեծ գժվարություններ : Այդ գժվարությունները նախ կայանում ենին նրանում վոր անասնապահությունը մինչև վերջին շրջանում հանդիսանում եր հանրահացած անտեսության ամենաթույլ բնագավառը : Զքավոր և միջակ դյուդացիները , վորոնք արդեն աեսել և համոզվել ելին խոչը հացահատիկային անտեսության առավելության մեջ , զեսոս չելին տեսնում խոչը անասնապահական անտեսությունների առավելությունը անհատականի համեմատությամբ : Դժվարությունը յերկրորդ կայանու եր նրանում , վոր սոցիալիստական անասնապահության կազմակերպման գործը հանդիպեց դասակարգային թշնամու ավելի ուժեղ լինդիմաղբուրյանը : Կուլակն անասնապահության Փրոնտում հանդես ըերեց կատաղի Ընդիմակարգություն , նրա դիրքերն այս ասպարիզում ավելի քան ուժեղ ելին : Նահանջելով հացահատիկային Փրոնտից , նա ավելի ամուր եր կառչել անասնապահու-

թյան դիրքերին : Այս եր պատճառը , վոր նա կարողացավ պրովակացիայի միջոցով վոչնչացնել տալ զգալի քահակությամբ անտառներ , կազմակերպել անտունեների մասսայական վաշնչացում մի շարք շրջաններում :

Այդ եր գլխավոր պատճառներից մեկը , վոր Պետպահնի տվյալներով 29թ . մարտ ամսից մինչև 20թ . մարտ ամսիը խոչը յեղջուրավոր անտառների թիվը մեզանում պակասեց մեկ հինգերորդով , կովերին՝ մեկ ութերորդով , վոչնչացներինը՝ մեկ յերրորդով և խորերինը՝ յերկու յերրորդով *) : Այս դժվարություններին ավելանում եր կերի արտադրության ծայրանիւնն ինտանիան հետամնացությունը մեզանում , սոցիալիստական անասնապահության կազմակերպիչ և մասնագետ կազրերի կատարյալ բացակայությունը : Յեվ վերջապես այս բոլորին պետք ե ավելացնել նաև այն , վոր անասնապահական պրոբլեմի լուծման համար կուսակցությունը սահմանեց ավելի կարճ ժամանակաշրջան :

Այսուղ ևս զասակարգային թշնամու ոժանդակության յեկան մեր կուսակցության սպորտունիստական տարրերը : Երանք սկսեցին ծունկ չոքել գժվարությունների առաջ : Փափացներ լսվեցին այն մասին , վոր «անասնապահության սովորիզում վեցըրած տեմպերը անիրազործելի յեն» : Վոր «անասնապահության ասպարիզում մենք չենք կարող այնպիսի հաջողություն ունենա , վորպիսին ունեցանք հացի Փրանտում» , վոր «կուսակցության քաղաքականությունը մոի մթերման ընտպավում հարվածում և անասնապահության նորմալածմանը» և այլն , և այլն :

Մենք ստիպված ելինք այս ճակատամասում յեկո ջախջախիչ հարված հասցնել զասակարգային թշնամու) 8ես ընկ . Յակովիելի գեկուցումը 16-րդ համագումարում :

մուն, վճռական պայքար մղել դժվարություններին յերկրագուռ ոպորտունիստական տարրերի դեմ, հեռու վանել անասնապահության ճանապարհից ուստիքարել «Հոգնած» աշխատողներին, ամրապնդել այդ ֆրոնտը կայուն, կոփված և գործոն աշխատավորներով և բայց վիկյան վճռականությամբ առաջ տանել սոցիալիստական անասնաբուծության կազմակերպման գործը մեր յերկրում :

ԱՌԱՋԻՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

ԱՌՅԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

Այդ հաստատուն քաղաքականության անշեղ կերպուման հիման վրա մենք ձեռք բերինք դդալի նվաճումներ սոցիալիստական անասնաբուծության կազմակերպման ասպարիզում: Վորոնք են մեր նվաճումների ցուցանիշները:

Համկոմի կուօթ կենտկոմի և ԽՍՀՄ ժողկոմի ուժի հուլիսան դիմումի տվյալներով առ 1-ն հուլիսի 1931 թ. մենք ունենք յերկու միլիոն գլուխ խոշոր յերջուրավոր անասուն անասնաբուծական խորհութեալություններում, 749.000 կով կոլտինեսական այրանքային ֆերմաներում, կես միլիոն խոզ «Սվինվոլֆի» խորհութեալություններում, 250.000 մայր խոզ կուտեսական ֆերմաներում: Խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների ապրանքային ֆերմաները առ 1-ն հուլիսի պետության են հանձնել 680.000 փութ յուղ: Ահա սրանք են սոցիալիստական անասնաբուծության հիմնական նվաճումները, նրա կազմակերպման առաջին տարում:

Այս թվերն ապացուցում են, վոր միայն մի տարվա ընթացքում խոչոր յեղջուրավոր անաստանների քանակով մենք գերազանցեցինք նախապատերազմյան թուստատանի կալվածատիրական և կուլակային անտեսությունների խոչոր յեղջուրավոր անաստանների քանակով առաջ նախապահության կազմակերպման ուղիները, անասնապահությանը վորը հիմնվելու յետեխնիկայի և գիտության վերջին տվյալների վրա: Զունենալով անասնաբուծական խոչոր անտեսություններ կազմակերպելու անցյալի վորեւ փարձ, սակայն հիմնվելով մարքուրմ-լենինիվմի վրա, ամբողջովին ոգտագործելով հացահատիկային սոցիալիստական տնտեսություններ կազմակերպելու փորձը՝ մեր կուսակցությունը ովատմության մեջ առաջին անգամ ցույց տվեց անասնապահության սովորակույն գարգացումն ապահովող սոցիալիստական ուղիները:

Մենք ապացուցեցինք, վոր «հանձինս կոլտինեսական ապրանքային ֆերմաների և նոտահան քոչնարութական կայանների՝ գտնվել ե հանրային անասնապահության և քոչնարութության այնպիսի ձեվ, վորն ամենից ավելի համապատասխանում է կոլեկտիվ տնտեսության զարգացման ներկա արտելային աստիճանին, և վորը խորհութեալությունների հետ միասին ամենից արագ և լուծում խոշոր ապրանքային անասնաբուծություն ստեղծելու խնդիրը» (Կենտկոմի և Ժողկոմի ուղիւղումից):

Եթ տարվա պրակտիկան ապացուցեց, վոր կոլտին-

տեսական ապրանքային ֆերմաները բարձրացնում են անասնաբուծության ապրանքայնությունը։ Նրանք առաջիս են մոտ 70% ապրանքային պրոդուկցիա (կոթ և յուղ) այն գեղքում, յերբ անհատական տնտեսությունների ապրանքայնությունը հասնում է 10-20%-ի, իսկ կոլեկտիվ տնտեսությունների սովորական հանրայնացքած հոտերինը 20-30%-ի։

Կոլտնտեսական ապրանքային ֆերմաները ներկայացնում են անասնապահության հանրայնացման ավելի բարձր ձեզը։ Նրանք հանդիսանում են կոլտնտեսությունների գյուղանուեսական ամենաշահավետ ձրուգը։ Այս, թե ինչո՞ւ անհրաժեշտ է, փորովելի գյուղատնտեսական այդ հյուզը մահվելում ոժանդակություն առանձ մեր կուսակցական, խորհրդային և կոռպերատիվ բոլոր որգանների կողմից։

Ինչպիսի նվաճումներ ունենք մեզ մոտ, Հայաստանում, այս գծով։ Հայ. Կոմկուսի կենտրոնը իր ուղուսոսի 13-ի վրոշման մեջ մատնանշում է՝ «Վերջին տարիներս վորոշ հաջողություններ ենք ձեռք բերել անասնաբուծության սոցիալիստական հատվածի ընդարձակման բնագավառում։ Ներկայումս մենք ունենք տաս խոշոր անասնաբուծական խորհրդանություններ, 14.909 գլուխ խոշոր յեղջուրավոր անասնություն 30 քահանի 4580 գլխի դիմաց և 21.000 վոչխար 30 քահանի 14.555 վոչխարի դիմաց։ Կազմակերպիվել ե 69 կուտքնտեսական ապրանքային ֆերմա 7300 խոշոր յեղջուրավոր անասնություն և 16.300 գլուխ մասն յեղջուրավոր անասնություն։»

Այսպես ուրեմն, ինչպէս բոլանդակ ԽՍՀՄ-ում, նոյնպէս և Հայաստանում, սոցիալիստական անաս-

նապահության գծով մենք ունենք զգալի նվաճումներ։ Սակայն մենք չենք կարող այդ նախնական նվաճումների դափնիքին հանդչել։ Մենք գենուս չենք լուծել անասնաբուծության պրոբլեմը, մենք արել ենք առաջին, վնասական և խոշոր քայլ այդ անպարփառմ։ Արձանագրելով մեր ունեցած առավելագեն բահականական նվաճումները՝ կենտրոնը և Ժողովրդական մատնանշեցին, վրասկական ցուցանիշների խիստ հետ միայլ, հատերի կուբական տավում վաչար արդյունեները, կերի հաստատուն բազայի բացակայությունը միշտ շարք տեղերում, անասնությունի անբավարար կերակրությունը և վատ խնամքը, տարափոխիկ հիվանդությունների տարածությը անասնություն, բազմարդիկ անասնությունի և զերազանցապես զահել անասնությունի կոտրպվելը, անտեսեսավարության փաստերը, խորհրդային և կոլեկտուլի տնտեսությունների կառուցողական աշխատանքների միանգամայն անբավարար վիճակը և այլն—այս բոլորը լուրջ խոչընդունենք են հանդիսանում սոցիալիստական անասնաբուծության 31 թվականի պահների լրիվ երազործման ձանապարհին։

Սակայն Համկոմկուսի կենտրոնը և Ժողովրդական չսահմանագծեցին լրի միայն մեր նվաճումների և թերությունների թվարկումով։ Վճռականապես զնելով թերությունների վերացման խնդիրները՝ նրանք ընդունեցին, սոցիալիստական անասնաբուծության պարզացման 31-32 թվականների մարտական ոլլանները, մատնանշելով մեր մոռագա աշխատանքների գործնական ծրագրը։ Այդ ծրագրի համաձայն 31 թվականին մենք պետք ենք հաստատուն պատվանդան առեղծենը անասնաբուծության սոցիալիստական հատվածի հետա-

դա արագ զարգացման համար այն հաշվով, վորպեսզի
«գյուղատնտեսության արտադրության առաջմմ դեռ
թույլ հանրայնացված այդ ճյուղում հաղթանակի իրոք
կազմակերպված, մեքենայացված, դիտության վերջին
նվաճումների վրա հիմնված խոչոր սոցիալիստական
տնտեսությունը» (դիմումից) :

Ինչպիսի՞ ծրագրային խնդիրներ են դրված մեր ա-
ռաջ: Համաձայն կենտկոմի և գողկոմխորհի դիմումի,
մինչև 1931 թվականի վերջը անասունների թիվը պետք
է հասցնել՝ «Սկսովողի» գծով 2.800 հազար դիմի,
«Ավելինովի» գծով 1.900 հազար դիմի, հանրապետա-
կան կաթնային արեստների գծով 260 հազար կովի,
«Սոյուզականարի» գծով 140 հազար կովի և 40 հազար
մայր խոզի: «Ովցելովի» գծով 480 հազար գլուխ վոչ-
խարի, ավելացնելով նաև պլանում նախատեսնված
կովերի թիվը նույն 50 հազարով, կաթնակոլտնտեսներո-
նի գծով 1 միլիոն 500 հազար գլուխ կթան կովի, խո-
զաբուծական կոլտնտեսներոնի գծով 700 հազար մայր
խոզի, ՌՄՖԽՀ յեղջուրաբուծական արեստների գծով
200 հազար գլ. կովի, ճատկան թոշնաբուծական կենո-
բոնի գծով 10 միլիոն թոչունի և այլն:

Նույնպիսի մարտական խնդիրներ են գրվում կո-
տնտեսությունների հանրայնացված հատերի լրացման
բնադրավառում: 31 թվականին կոլտնտեսական սիստե-
մը պետք է լրացնի կոլանտեսությունների հանրայնաց-
ված հատերն առնվազն մեկ ու կես միլիոն գլուխ հոր-
թով, 500 հաշտար գլուխ խոճկորով և մեկ միլիոն գլո-
ւուխ գառով:

Հայաստանում մեր առաջ գրված են՝ մինչև 31
թվի վերջը անասունների թիվը հասցնել «Սկսովողի»

միավորներում՝ 17.400 դլիմի, նախատեսնված՝ 13.700
դլիմի փոխարեն, «Սախարկոմքինսատի» գծով 1.200
դլուխ կովի, կաթնասուղային տրեստի գծով 462 դլ-
լուխ կովի, Պետքաղվարչության խորհանտեսություն-
ների գծով 425 կովի, մերձքաղաքային տնտեսություն-
ների գծով՝ 750 կովի, կաթնանասնապահական ֆեր-
մանների գծով 2000 դլուխ կովի, բոլոր գծերով խոզերի
թիվը հասցնել 6150 դլիմի (մայր խոզ), վոչխարների
թիվը բոլոր գծերով մաս 100 հազարի, թուչումների
թիվը բոլոր գծերով մաս 14 հազարի:


Այսպիսով մոտագա 3-4 ամիսը և ամբողջ 32 թիվը
մեր առաջ գրված ե սոցիալիստական անասնապահու-
թյան զարգացման վեհակարի պլաններ: Այդ պլանների
իրագործումը պահանջում է կուսակցական, խորհր-
դային և կոլանտեսական կազմակերպությունների և
մեր բոլոր ուժերի գերազույն լարվածությունների:
և մեր բոլոր ուժերի գերազույն լարվածությունների:
պահանջում է բայց լինիկան տեմպ, համար և աննկուն
ովայքար: Այդ ինտերի լուծումը հանդիսանում է ըն-
թացիկ շրջանի մարտական և կենտրոնական խնդիրը
զյուղատնտեսության ասպարիզում:

Այստեղից ինչպիսի գործնական խնդիրներ են դր-
վում մեր աշխատանքների որակարգում:

Ա. ՀՈՑԵՐԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Հանրայնացված անասնապահության հոտերի կոմ-
պլեկտավորումը գնում է՝

ա) խորհրդային և կուեկտիվ տնտեսությունների
յերիտասարդ սերնդի և բ) Սարուզմասոյի մթերած ա-
նասունների հաշվին՝ 31 թվականի դիմումության համապատակում
հիմնական աղբյուրը հանդիսանալու մեջ՝ «Սոյուզմասո-



15531 - 57

յի» անասունները : Սակայն Հետագայում ինչպես խորհրդացյին տնտեսությունները, նույնպես և կոլտնտեսական ապրանքային Փերմաները իրենց հոտերը լրացնելու յեն հիմնականում իրենց սեփական յերիտասարդ սերընդի հաշվին : Ներկայումս, յերբ կոմպլեկտավորումը գնում և գլխավորապես Սոյուզմյասոյի գծով, վերջինիս աշխատանքների ճիշտ կազմակերպումը վճռական նշանակություն ունի անասնաբուժության 31-32 թվականների պլանների իրավորձման համար : Մինչեվ այս տարիվ վերջը Սոյուզմյասոն անասնապահական կոլտնտեսություններին պետք է հանձնի 1.700 հազար խոշոր յեղջյուրավոր անասուն, 2 և կես միլիոն հորթ և ջահել անասուններ, 415 հազար մայր խող, 2 միլիոն վոչխար և 875 հազար հատ թուզուն :

✓ Հայաստանում Սոյուզմյասոն պետք է մինչեվ հւոնվարի մեկը խորհանտեսություններին հանձնի 2300 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, 2000 գլուխ հորթ և յերինջ, 670 գլուխ մայր խող, 25 հազար գըլուխ վոչխար և այլն :

Սակայն կոմպլեկտավորման ասպարիզում մենք չենք կարող տարվել միայն ժամակական ցուցանիշների իրավորձմամբ : Մենք չպետք ենք լրացնենք մեր հոտերը առհասարակ ամեն կարգի անասուններով : Սոցիալիստական հաստածի անասնաբուժական հոտերը պետք ենք լրացվեն միայն լավագույն և մեծ ապրանքայնություն խոստացող անասուններով : Հատկապես այս խնդրի վրա քիչ ուշադրություն են դարձնում ընդունող կազմակերպությունները : Այդ և պատճառը, վոր 1931 թվի գարնան Սոյուզմյասոմից ստացված անասունների կեսից ավելին վոչնչանում են մի շարք վայրերում :

Հետ մեկտեղ Սոյուզմյասոյի մքերած անասունների լավագույն մասը ամբողջովին պետք է ընդգրկել սոցիալական հասվածում : Կենտկոմի և Ժողկոմխորհի դիմումը պարտավորեցնում է բոլոր լրջաններին (մինչև իսկ այն շրջաններին, վորտեղ ամբողջովին իրագործվել են կոմպլեկտավորման պլանները) անպայման ընդունել Սոյուզմյասոյի բոլոր լավագույն անասունները : Անհրաժեշտ է իսկոտ պատասխանատվության յենթարկել այս վորոշումը զանց առնողներին : Մատակարարման ժողկոմատը և տեղական կազմակերպությունները ամենայն վճռականությամբ պետք է պայքարեն աղնվացեղ անասունների մորթելու պրակտիկայի դեմ : Պետք է զախշայի հարկած տալ դասակարգային քննամուն, վորը պրովակացիայի միջոցով փորձ կանի վորակյալ անասունների վոչնչացմամբ խանգարել սոցիալիստական անասնաբուժության կոմպլեկտավորման գործը : Անհրաժեշտ է իսկոտ կերպով կերպուել այս առթիվ հրապարակած պետական վորոշումները :

Սոյուզմյասոն պետք է ապահովի մթերման բազաները անհրաժեշտ հարմարություններով և պահանջվող անասնաբուժական պերսոնալով : 31 թվի գարնան փորձը ցույց տվեց, վոր Սոյուզմյասոյի մի շարք բազաների ոպորտունիստական և միանգամայն անփույթ վերաբերմունքի հետեւանքով անասունների և այդ թվում նաև վորակյալ անասունների մի զգալի մասը վոչնչացավտարափոխիկ հիվանդություններից, վատ խնամքից ու ցրտից :

Կենտկոմի և Ժողկոմխորհի դիմումը Սոյուզմյասոյից՝ խորհանտեսությունների կողմից անասուններն ընդունելու ժամկետը սահմանվում է 5-8 որ : Այդ ժամդունքում ժամկետը սահմանվում է 5-8 որ :

մանակաչրջանը սահմանված են նրա համար, վոր ընդուռ
նող կազմակերպությունները կարողանան իրոք զոկին
ամբողջ լավորակ անսառնները։ Մեր համապատաս-
խան կազմակերպությունները պետք են հսկեն, վոր վոչ
մի անսառն սպանդանոց չգնա մինչեւ վոր ըընտրվի
նրա լավագույն մասը, անասնաբուժական սոցիալիս-
տական հոտերի կոմպլեկտավորման համար։

Այս բոլորի հետ մեկտեղ մեր խորհրդային և կունկ-
տիվ տնտեսությունների առաջ վորպիս չափազանց կա-
րեվոր խնդիր՝ դրվում են զահել անառնեների լավա-
գույն պահպանման և խնամքի գործը։ Հատկապես այս
ասպարիզում մենք ունենք աղաղակող թերություններ։
Կարելի յետ տասնյակ փաստեր բերել այն մասին, թե
ինչպես միանդամայն անտարբեր վերաբերմունքի և մի
շարք տարրական միջոցներ ձեռք չառնելու պատճառով
բազմաթիվ ջահել անսառններ վոչնչանում են խորհրդ-
դային և կունկտիվ անսառություններում (Յանդ, Ղա-
րաբալա, Աղբարա, Սեմյոնովկա և այլն)։ Այն ինչ,
նրանք պետք են հանդիսանան անասնապահական սո-
ցիալիստական սեկտորի հոտերի լրացման մոտակա ժա-
մանակաշրջանի հիմնական աղբյուրը։

Կենտկոմի և Ժողկոմխորհի դիմումը կոլտնտկենտ-
րոնին պարտավորեցնում են 31 և 32 թվին լրացնել
հանրայնացված հոտերը 5 և կես միլիոն հորթով, 3 ու
կես միլիոն խոճկորով, 3 միլիոն դառով։ Այս չափա-
զանց պարտավորանառու խնդրի իրագործումը պահան-
ջում է, վորպեսզի մեր կոլտնտեսական վողջ սիստեմն
արմատական շրջաբարձ կատարի դեպի անասնապա-
հությունն ընդհանրապես և դեպի զահել անառնեների
պահպանման ու խնամքը մասնավորապես։ Կոլտնտե-

սական սիստեմը այդ ծրագիրը պետք են իրագործի մի
կողմից զնելով իր անդաների հորթերը, մյուս կողմից
հանրայնացնելով կոլտնտեսականների ավելացած ա-
նասռների մի մասը։ Նույնպիսի պատասխանառու
ինդիքը եղբայրակային տնտեսությունների ա-
ռաջ ջահել անսառների պահպանման և խնամքի աս-
պարիզում։

Կենտկոմի և Ժողկոմխորհի դիմումի մեջ հատուկ
կարելորություն են տրվում մանր անանաբուժության
(խողաբուժություն-ճաղարաբուժություն) և թունա-
բուժության կազմակերպմանը։ Կուսակցության 16-րդ հա-
մագումարը մասնանշեց խողաբուժության զարգացման
չափազանց կարելոր նշանակությունը մսի պրոբեմի
լուծման ասպարիզում։ Զնայած այս բոլորին, մանր ա-
նանաբուժության և թունաբուժության կազմակերպ-
ման գործը մինչեւ այժմ անհրաժեշտ բարձրության
վրա չել դրված։ մեր մի շարք կազմակերպություններ
երեսց «պատվից ցածր» են համարում գրադվել այնպի-
սի «չնչին» հարցերով, ինչպիսին խողաբուժությունն
ու թունաբուժությունն են։ Անհրաժեշտ և
վճռական պայքար մղել մանր անանաբուժության
և թունաբուժության թերապևտական այդ տես-
ղենցների դեմ, վճռական բեկում առաջ բերելով
սական ասպարիզում։ Մենք պետք են սոցիալիստա-
կան անասնապահության կազմակերպման «սեվ աշխա-
կան անասնապահության կազմակերպման «սեվ աշխա-

Բ. ԿԵՐԻ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Անասնաբուծության պլրոբեմի լուծման համար վճռական նշանակություն ունի կերի բազայի ստեղծումը: Այստեղ գործն ավելի բարդ է և դժվար, քան հացատիկային տնտեսության մեջ: Անասնաբուծության բնադրավառում մենք գործ ունենք վոչ թե մեքենաների, այլ կենդանի եյակների հետ, այն ել վոչ թե մանր գյուղացիական տնտեսությունների շրջանակներում, այլ և հազարավոր և տասնյակ հազարավոր գլուխ անասուն ունեցող խորհրդային տնտեսությունների շրջանակներում: Հացահատիկային խորհրդականություններում, յեթե մենք չկարողանանք 2-3 որ մեքենաներին այրման նյութ (նավթ, բենզին) հասցնել, նրանք կտան 2-3 որվա դադար, բայց յեթե նույն բանը տեղի ունենա հազարավոր և տասնյակ հազարավոր հոտերին կեր հայթայթելու ասպարիզում, այս դեմքում մենք կանգնած կլինենք հսկայական չասնող կենդանի քաշի և կաթնամթերքային պրոդուկցիայի կորստյան փաստի առաջ: Ահա թե ինչո՞ւ մենք այստեղ գործ ունենք ավելի բարդ խնդրի հետ:

